ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 հունվարի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

5
(2671)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 6

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանը հոկտեմբերի 7-ին «Ֆակտոր» լրատվականի հետ զրույցում հայտարարել էր, որ Հայաստանը 2020-ի 44-օրյա պատերազմից հետո այլեւս չունի հնարավորություն եւ ռեսուրս ապահովելու Արցախի ժողովրդի իրավունքները եւ անվտանգությունը: Ըստ Աղաջանյանի՝ արցախցիների անվտանգության երաշխավորը, 2020-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ, միայն ռուս խաղաղապահներն են: Նույն հարցազրույցում Աղաջանյանը կարծիք էր հայտնել նաեւ, որ առկա միակ ռեսուրսը արցախցիների իրավունքների եւ անվտանգության ապահովման հարցով միջազգային հանրության կողմից ճնշումներն են: ՀՀ-ն, ըստ Աղաջանյանի, չունի որեւէ ռազմական, տնտեսական եւ քաղաքական ռեսուրս դրանց ապահովման համար: «ՀՀ-ն որեւէ պրակտիկ, գործնական վերահսկողություն Արցախի նկատմամբ չունի նոյմեբերի 9-ից ի վեր: Կրկնում եմ՝ ո՛չ ռազմական, ո՛չ քաղաքական նույնիսկ»,- հավելել է նա: Էդուարդ Աղաջանյանը նշում է, որ վերոնշյալ իրավիճակը ծագել է 2020-ի նոյեմբերից: Այս հայտարարությունները, սակայն, հակասում են պատերազմից հետո իշխանությունների պաշտոնական դիրքորոշմանն ու ներկայացրած նախընտրական ու կառավարության ծրագրերին: Մասնավորապես, 2021-ի խորհրդարանական արտահերթ ընտրություններին ընդառաջ ներկայացված նախընտրական ծրագրում՝ Արցախի հիմնախնդրի մասին բաժնում, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ասում է. «Հայաստանի Հանրապետությունը շարունակելու է լինել Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորը եւ շարունակելու է աշխատել Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Խորացնելու ենք համագործակցությունը Արցախի հետ անվտանգային եւ ռազմական ոլորտներում: Մենք գործուն օժանդակություն ենք ցուցաբերելու Արցախին Պաշտպանության բանակի վերակառուցման ու արդյունավետության բարձրացման գործընթացում»: Իսկ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի՝ «Ղարաբաղյան հիմնախնդիր» բաժնում ասվում է, որ առաջիկա տարիներին կառավարության գլխավոր խնդիրը պետք է լինի ԼՂ ժողովրդի անվտանգության ապահովումն ու Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ եւ համապարփակ կարգավորումը: Այսինքն՝ եւ իշխող կուսակցության, եւ 2021-ին ընդունված կառավարության ծրագրերում կրկնվում է նախադասությունը, որ ՀՀ-ն շարունակելու է լինել Արցախի «անվտանգության երաշխավորը», սակայն թե՛ Էդուարդ Աղաջանյանը, թե՛ այլ ՔՊ-ականներ շարունակաբար հայտարարում են, որ արդեն ռուսական խաղաղապահն է պատասխանատուն:

«Ժողովուրդ» օրաթերթին բացառիկ մանրամասներ են հայտնի դարձել Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի եւ արցախցի պատգամավորների երեկվա հանդիպումից: Արցախից մեզ հայտնեցին, որ մոտ մեկ ժամ տեւած հանդիպման ժամանակ քննարկվել են մեծ մասամբ անվտանգային հարցեր: Արայիկ Հարությունյանը արցախցի պատգամավորներին հստակ ասել է, որ իրավիճակն Արցախում ծայրահեղ է, իսկ Լաչինի միջանցքի հարցն, առհասարակ, փակուղում է. Ադրբեջանը հրաժարվում է բանակցությունների դուրս գալ որեւէ կողմի հետ: Ինչ վերաբերում է Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանի հրաժարականի հետ կապված խոսակցություններին, Արցախից մեզ մանրամասնեցին, որ թեեւ ոչ ուղիղ տեքստով, բայց խոսվել է, որ հրաժարականի պահանջը գալիս է Հայաստանի իշխանություններից եւ Արեւմուտքից: Հայաստանի իշխանություններին, մասնավորապես, դուր չի եկել Ռուբեն Վարդանյանի քննադատությունն այն մասին, որ Հայաստանի իշխանությունը, ֆինանսական օգնությունից բացի, այլ քայլ չի անում՝ Արցախում ստեղծված ճգնաժամի լուծման հետ կապված: Արցախի մեր աղբյուրները հայտնեցին, որ Արայիկ Հարությունյանն իր խոսքում վստահեցրել է, թե Ռուբեն Վարդանյանի հետ անձնական որեւէ խնդիր չունի: Արցախում բոլորը գիտեն, որ իրականում թեեւ տպավորություն կա, թե Ռուբեն Վարդանյանին Մոսկվայից են նշանակել պետնախարար, իրականում այդպես չէ, առավել եւս՝ որ ՌԴ շահի դեմ Վարդանյանն արդեն դուրս է եկել իր տարբեր հայտարարություններով, այսինքն՝ Վարդանյանը «ռուսների մարդը չէ», նրան Արայիկ Հարությունյանն է նշանակել՝ չճշտելով այդ նշանակումը ո՛չ ՀՀ-ի, ո՛չ էլ ՌԴ-ի հետ:

⇨ էջ 3

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ՀՀ քննչական կոմիտեն ՀՀ ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն Գեորգի Կուտոյանի ինքնասպանության գործով պետք է համապատասխան որոշում կայացնի: Այսօր լրանում է ԱԱԾ նախկին տնօրենի մահվան երրորդ տարին, եւ ամենակարեւոր հարցը շարունակում է մնալ անպատասխան արդեն 3 տարի. ինչո՞ւ նա գնաց այդ ծայրահեղ քայլին: Վարույթն իրականացնող մարմինը քննել էր միայն ինքնասպանության վարկածը, որից հետո որոշեց կասեցնել քրեական գործով քննությունը: Ի՞նչ ունենք այսօր. նոր քրեական դատավարության օրենսգրքով այլեւս կասեցված վարույթներ չեն կարող լինել: Ընթացակարգը հետեւյալն է. կասեցված գործերը պետք է վերսկսվեն եւ համապատասխան քրեադատավարական որոշումներով ավարտվեն: Նույն ընթացակարգը պետք է գործի նաեւ Գեւորգի Կուտոյանի քրեական գործով, եւ Քննչական կոմիտեն, ըստ էության, պետք է կոնկրետ որոշում կայացնի՝ կամ պետք է վերսկսի քրեական վարույթը, եւ նոր վարութային գործողություններ արվեն, մեղադրանք առաջադրվի, կամ վարույթը կարճելու որոշում կայացվի: «Ժողովուրդ» օրաթերթը դիմել է ՀՀ քննչական կոմիտե եւ հարց ուղղել, թե արդյոք քրեական վարույթը կարճվել է, թե վերսկսվել: Ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից հայտնեցին. «Այս պահին կասեցված է վարույթը: Նոր, այսինքն՝ գործող Քրեադատավարական օրենսգրքի ընթացակարգերով համապատասխան լուծում կտրվի»:



Օրեր առաջ «Ժողովուրդ» օրաթերթն անդրադարձել էր ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ընտանիքին պատկանող «Սիլ ինշուրանս» ապահովագրական ընկերությանը: Գրել էինք, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն պահանջել է պատգամավորի ընտանիքին պատկանող ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այսինքն՝ ընկերությանը «սեւ ցուցակում» ներառելու պահանջի պատվիրատուն ՊԵԿ-ն է: «Սիլ ինշուրանս»-ը, սակայն, չի հայտնվել «սեւ ցուցակում»: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշել է նաեւ «Սիլ գրուպ» -ի մամուլի խոսնակ Աննա Մկրտչյանը՝ ասելով. ««Սիլ ինշուրանս»-ը երբեւէ չի ներառվել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում»: Այս մասին լուրը հրապարակելուց հետո «Սիլ ինշուրանս» ընկերությունը շտապեց «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն ուղարկել հերքման ինչ-որ տեքստ՝ պահանջելով «մեկշաբաթյա ժամկետում «Ժողովուրդ» օրաթերթի առաջին իսկ թողարկման մեջ՝ 1-ին էջում, եւ www.armlur.am կայքում հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները, այն է՝ «ՊԵԿ-ը պահանջել է Սուքիասյանի ընտանիքին պատկանող ընկերությունը ներառել «սեւ ցուցակում» փաստը»: Բայց ի՞նչը հերքենք, եթե մենք ունենք մեր գրածը վկայող կոնկրետ փաստաթուղթ:

⇨ էջ 4

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ ԴԵՄ ԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

«Ո՛չ Արցախի կառավարությունը, ո՛չ էլ արցախցիները կոնկրետ ժամկետներ չեն տեսնում Լաչինի միջանցքի բացման համար: Ամեն ինչի համար բոլոր, այդ պահից բխող որոշումներ են ընդունվում»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է Արցախի Ազգային ժողովի «Միասնական հայրենիք» խմբակցության պատգամավոր Սեյրան Հայրապետյանը:

Արցախցին, ասում է, թեեւ դիմացկուն է, բայց հենց այնպես, ձեռքերը ծալած նստելով դիմադրել չի լինում: Իշխանությունների կողմից գործողություններ են պետք, մանրամասնում է, ինչն էլ տեսնելով՝ տեղացիներն այնքան էլ չեն ընկճվի:

Այս օրերին Արցախի քաղաքական դաշտում նկատվող ոչ միանշանակ մթնոլորտի մասին պատգամավորը տեսակետ հայտնել չի շտապում, բայց եւ արձանագրում է՝ այժմ քաղաքական ինտրիգներ ստեղծելու ժամանակը չէ, կատարվող իրադարձություններն էլ իր սրտով չեն:

Խոսքը, մասնավորապես, Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանի շուրջ ստեղծված իրավիճակին է վերաբերում: Այս օրերին բոլորն ուշադրությամբ հետեւում են Արցախում կատարվող իրադարձություններին եւ հանգուցալուծում սպասում: Բոլորը սպասում եւ կարծում էին, որ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը պետք է ստորագրի պետնախարար Ռուբեն Վարդանյանին ազատելու որոշումը, սակայն քննարկումների արդյունքում այլ որոշում կայացվեց:

Այս եւ այլ հարցերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Միասնական հայրենիք» խմբակցության պատգամավոր Սեյրան Հայրապետյանի հետ:

-Պարոն Հայրապետյան, ի՞նչ է կատարվում Արցախում այս օրերին:

-Ցավալին այն է, որ ո՛չ կառավարությունը, ո՛չ Արցախի ժողովուրդը կոնկրետ ժամկետներ չեն տեսնում Լաչինի միջանցքի բացման համար: Բացի այդ, կոնկրետ չի նշվում, թե ինչ է արվում, ստեղծված իրավիճակից փորձում ենք որոպեական որոշումներ կայացնել: Ինչպես գիտեք, սննդի հետ կապված շատ ու շատ տեսակներ բացակայում են, բացի դրանից, անվտանգային խնդիրների հետ կապված եւս կան բազմաթիվ հարցեր, որոնք այս պահին ցանկալի չէ նշել: Ամեն դեպքում, վիճակը գնալով ավելի ու ավելի է բարդանում:

-Իսկ մարդիկ ի՞նչ վիճակում են գտնվում:

-Մարդիկ մտահոգ են, ու, ճիշտ է, մենք ասում ենք՝ արցախցին դիմացկուն ու համբերատար է, բայց գիտեք՝ հենց այնպես մշտապես դիմանալով չէ, պետք է ինչ-որ գործողություն անի, պայքարի, իշխանությունների կողմից այդ ամեն ինչը պետք է տեսնի, որ չընկճվի:

-Իսկ քաղաքական դաշտում ի՞նչ իրավիճակ է տիրում:

-Քաղաքական դաշտում կան տարբեր պրոցեսներ, որին ես չեմ ցանկանում անդրադառնալ, քանի որ այդ նիստերին ու քննարկումներին մեր հանձնաժողովի անդամները ներկա չեն եղել: Որպես հանձնաժողովի նախագահի, համապատասխան ոլորտի ներկայացուցչի՝ ինձ հետ չեն խորհրդակցել: Իրենք նշանակում են, իրենք ազատում են, իրենք՝ հաշտվում: Ավելի լավ կլինի՝ հենց իրենցից հարցնեք, թե ինչ են անում: Ամեն դեպքում, դժգոհ եմ այդ ամեն ինչից, քանի որ այս իրավիճակում, երբ Արցախն արդեն 37 օր շրջափակված է, պետք չէ տրվել անձնական ամբիցիաների, անձնական շահերն առաջ տանել: Պետությունը պետք է ղեկավարվի սթափ, սառը գլխով ու ճիշտ նշանակումներով:

-Նոր նշանակումների՞ց եք դժգոհ:

-Ես դժգոհ եմ ընդհանուր իրավիճակից: Հասկանալի է՝ շատ բաներ մեր ձեռքին չեն, բայց շատ բաներ կան՝ պետք է սկզբունքային դիրքորոշում ունենանք: Ես այս պահին կոնկրետ կարող եմ ժողովրդի կարծիքն ասել, որ այս իրավիճակում ժողովուրդը կողմ չէ որեւէ արտահերթ ընտրության, եւ ասում են, որ պետք է ոչ թե այդ հարցերի մասին մտածել, այլ այս իրավիճակից ելքեր է պետք փնտրել:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՊԱՅՔԱՐՈՒՄ Է ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԴԵՄ

Լրագրողներին վարձկանների հետ համեմատելու իր անպարկեշտ հայտարարությամբ հայտնի ՀՀ արդարադատության նախկին նախարար Կարեն Անդրեասյանը հիմա էլ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի կարգավիճակում է փորձում պայքարել լրագրողների դեմ: Բանն այն է, որ երեկ առավոտյան ԲԴԽ լրատվական ծառայության կողմից հաղորդագրություն տարածվեց այն մասին, որ լինելու է դատավորների ընդհանուր ժողով: Շատ լրագրողներ, այդ թվում՝ «Ժողովուրդ» օրաթերթի ներկայացուցիչը, գնացին՝ լուսաբանելու նիստը, զրուցելու դատավորների հետ, սակայն տեղում արդեն լրագրողներին տհաճ անակնկալ էր սպասվում. նրանց արգելվեց ժողովի վայր մտնել, իսկ դատավորներն էլ տարբեր մուտքերով ներս մտան՝ խուսափելով ջորրորդ իշխանության հետ հանդիպումից: Լրագրողները ստիպված են եղել «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի բակում կամ ետնամուտքի մոտ ցրտին կանգնել եւ սպասել: Այսինքն՝ ԲԴԽ նախագահը եւ հրավիրում է լրագրողներին՝ լուսաբանելու որեւէ միջոցառում, եւ արգելքներ է սահմանում, ասել է թե՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դիմանկարից ոգեշնչվող նախկին նախարարը լրագրողներին թողել է դրսում: Հիշեցնենք՝2021 թվականի օգոստոսի վեցին լրագրողների հետ զրույցում այն ժամանակվա ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը, խոսելով Ազգային ժողովում իրականացվող լրագրողների դեմ սահմանափակումների եւ դժգոհությունների մասին, նշել էր, որ կողմ է սահմանափակումներին՝ասելով. «Ազատ շարժի դեպքում կարող են լինել վարձկաններ, որոնք կարող են նաեւ թաքնված լինել լրագրողի կերպարի տակ, եւ նույնիսկ այդպիսիններից պետք է պաշտպանվել, հետեւաբար ես գտնում եմ, որ մենք պետք է ապավինենք անվտանգության մարմիններին»:

ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նախորդ տարվա նոյեմբերին ֆիզիկական անձանց անունով բանկերի միջոցով արտերկրից ստացված տրանսֆերտների զուտ ներհոսքը կազմել է 225 միլիոն 321 հազար դոլար: Նկատենք, որ, հոկտեմբեր ամսվա համեմատ, Հայաստան ուղարկված դրսի փողերի՝ տրանսֆերտների զուտ ներհոսքը ավելացել է 101 միլիոն 602 հազար դոլարով: Արձանագրենք, որ նոյեմբերին տրանսֆերտները շարունակել են նախորդ տարվա հոկտեմբեր, սեպտեմբեր եւ օգոստոս ամիսների համեմատ նվազել, բայց հուլիս ամսվա համեմատ՝ այն զգալի ավելացել է: Բացի այս, նշենք, որ Ռուսաստանի Դաշնությունից ստացված զուտ ներհոսքը, այլ կերպ ասած՝Հայաստան եկած ու մնացած գումարը, նոյեմբեր ամսին կազմել է 317 մլն 935 հազար դոլար. այն, սեպտեմբեր ամսվա համեմատ, 123 մլն 924 հազար դոլարով պակասել է: Նշենք, որ այդ գումարների մեծ մասը փոխանցում են արտերկրում աշխատող մեր հայրենակիցները, եւ նրանց կողմից ուղարկված գումարները այստեղ ապրող նրանց ընտանիքների ապրուստի հիմնական միջոցներն են: Նկատենք նաեւ, որ պակասել է ԱՄՆ-ից Հայաստան ստացված տրանսֆերտների զուտ ներհոսքը. եթե նախորդ տարվա սեպտեմբերին այն կազմել է 25 մլն 835 հազար դոլար, ապա նոյեմբերին դարձել է 11 մլն 778 հազար դոլար:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՔԵՐԹ

Կառավարական կաբինետում շուրջ մեկ ամիս պաշտոնավարող փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանն այս ժամանակահատվածում պաշտոնանկությունների շքերթ է իրականացրել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Խաչատրյանը պաշտոնի նշանակվելուց տասն օր անց՝դեկտեմբերի 28-ին, սկսել է ազատման դիմումներ ստորագրել: Նախորդ տարվա ավարտին՝ երկու, իսկ արդեն 2023-ի հունվարի 3-ից մինչ օրս փոխվարչապետի գրասենյակում չորս ազատում է եղել: Ինչ վերաբերում է նշանակումներին, ապա դրանք երկուսն են. Լիանա Խաչատրյանը՝ փոխվարչապետի օգնական, իսկ Արման Ադիլխանյանը փոխվարչապետի գրասենյակի ղեկավար է նշանակվել: Երկուսն էլ, ի դեպ, Խաչատրյանի հետ մեկտեղ Ֆինանսների նախարարությունից են փոխվարչապետի գրասենյակ գնացել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ փոխվարչապետ Խաչատրյանն առաջիկայում ազատման նոր հրամանագրեր կստորագրի ու թափուր մնացած պաշտոններում յուրայիններին կնշանակի:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հրամանագրով՝ խորհրդարանի աշխատակազմի արարողակարգի վարչության նոր պետ է նշանակվել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այդ պաշտոնում է նշանակվել Ալեքսանդր Մխիթարյանը: Տեղեկացանք նաեւ, որ նա ԱԺ է գործուղվել ՀՀ արտաքին գործերի նախարարությունից:

Մխիթարյանը, հավելենք, նախկինում՝ 2018-ի իշխանափոխությունից հետո, վարչապետի արարողակարգի պետի տեղակալ է եղել: 2019-ի ապրիլին, վարչապետ Փաշինյանի հրամանագրով, ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Հավելենք նաեւ, որ Մխիթարյանից առաջ Ազգային ժողովի արարողակարգի պետը Հակոբ Հաջի-Հակոբյանն էր: ArmLur.am-ը տեղեկացավ, որ նա աշխատանքից 2022-ի դեկտեմբերի 30-ին է ազատվել:

Նրա անցյալին «Ժողովուրդ» օրաթերթն անդրադարձել էր դեռ դեկտեմբերի 8-ին: Մենք, մասնավորապես, գրել էինք, որ նա դատվածություն ունի, դեռեւս 2013-ին, երբ աշխատել է ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության պետ, կաշառք վերցնելու կասկածանքով (գումարի դիմաց կեղծ վիզաներ է տրամադրել) դատապարտվել է երկու տարվա ազատազրկման:

Նշենք՝ Հաջի-Հակոբյանի դուստրը, որ ՀՀ ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանի նշանածն է, նույնպես խորհրդարանում՝ Արտաքին հարաբերությունների վարչությունում է աշխատում: Ստացվում է՝ Ալեն Սիմոնյանն աշխատանքից ազատել է ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանի աներոջը:

ՆԵՂԱՑԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթին բացառիկ մանրամասներ են հայտնի դարձել, թե ինչու ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար, քպ-ական Արմեն Փամբուխչյանը չնշանակվեց ներքին գործերի նախարարի տեղակալ, արտակարգ իրավիճակների ոլորտի պատասխանատու: Նշենք, որ Ներքին գործերի նախարարության հաստատված կառուցվածքի համաձայն՝ նախարարը պետք է ունենա չորս տեղակալ, եւ այդ հաստիքներն արդեն զբաղեցված են: Նրանք են Արամ Հովհաննիսյանը, Արփինե Սարգսյանը, Դավիթ Համբարյանը եւ Կամո Ցուցուլյանը: Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արմեն Փամբուխչյանին առաջարկել են զբաղեցնել փոխնախարարի պաշտոնը, բայց նա հրաժարվել է: Իրականում պաշտոնից նրա հրաժարումն ունի խորը արմատներ: Իշխանություններից մեզ հասած լուրերի համաձայն՝նա հրաժարվել է փոխնախարարի պաշտոնն ընդունել, քանի որ քաղաքական իշխանությունները նրան չտարան ներքին գործերի նախարար եւ նախընտրեցին Վահե Ղազարյանին: Փամբուխչյանը, մասնավորապես, ասել է, որ չի պատրաստվում նախարարից հետո գնալ եւ որպես ենթակա աշխատել որեւէ նախարարի: Ասել է թե՝ ՔՊ-ական Փամբուխչյանը նեղացած է թիմից ու Նիկոլ Փաշինյանից:

ՏԵՍԱՆՅՈՒԹ ԿԱ

Հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանին ծեծի ենթարկելու դեպքից 3 ամիս անց գործն այդպես էլ չի բացահայտվել. չկա ո՛չ կասկածյալ, ո՛չ մեղադրյալ: Հիշեցնենք, որ 2022 թվականի հոկտեմբերի 18-ին անհայտ անձինք հարձակվել եւ ծեծի են ենթարկել Էդգար Ղազարյանին: Ըստ տուժողի՝ դեպքը տեղի է ունեցել իրենց շքամուտքի մոտ, երբ տուն էր վերադառնում վարսավիրանոցից: Նույն օրը ՔԿ-ում քրեական վարույթ էր նախաձեռնվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով՝ մի խումբ անձանց կողմից առողջությանը թեթեւ վնաս պատճառելու հատկանիշներով: Ավելին՝ այս իրավիճակից հետո ոստիկանությունում սկսել են քննարկել նաեւ այն վարկածը, թե հենց Էդգար Ղազարյանը կարող էր ծրագրած լինել իրեն ծեծի ենթարկելու գործը: Եվ, ահա, վաղը, երբ լրանալու է այս միջադեպի երրորդ ամիսը, Էդգար Ղազարյանը որոշել է անձամբ ասուլիս տալ, բացահայտումներ անել եւ ներկայացնել նաեւ տեսանյութը, որտեղ երեւում է, թե ինչպես են բակում ծեծի ենթարկում իրեն: Իհարկե, ոստիկանների կողմից շրջանառվող այս կարծիքը, թե միգուցե հենց նա է կազմակերպել այս ամենը, իրենց անգործությունը քողարկելու պատրվակ է, քանի որ իրականում կա տեսանյութ, թե ովքեր որտեղից են հարձակվում Էդգար Ղազարյանի վրա: Այ եթե որեւէ իշխանական գործիչ ծեծի ենթարկվեր, գործը կբացահայտվեր ժամերի ընթացքում:

ԽՆԴԻՐ ՉԿԱ

ԱՐՑԱԽՈՒՄ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՇՏՎԵԼ ԵՆ

Արցախն արդեն շրջափակման մեջ է 36 օր, սակայն այս դայմաններում Արցախում անառողջ մթնոլորտ է եւ լարված ներքաղաքական իրավիճակ: Ստացվում է՝ մի կողմից Ադրբեջանն է բզկտում ու թուլացնում Արցախին, փորձում հայաթափել, մյուս կողմից հենց արցախցիներն են ներսում անհաշտ, իշխանության համար կռիվ են տալիս:

Այն, որ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի եւ պետնախարար Ռուբեն Վարդանյանի հարաբերությունները լարվել են, ակնհայտ դարձավ տարբեր դրսեւորումներով: Նախ՝ Ռուբեն Վարդանյանը Նիկոլ Փաշինյանի օրինակով սկսեց նախկինների դեմ ատելություն գեներացնել, հագավ արդարության մարտիկի պատմուճանը, բարձրաձայնեց անարդարությունների մասին, սակայն իրականում, բացի խոսքից, որեւէ գաղափարական քայլ, ռազմավարական տեսլական չներկայացրեց ու գործնական որեւէ քայլ չարեց: Նա սկսեց Արցախի շահի դեմ բաներ խոսել, օրինակ՝հայտարարեց, թե Լաչինի ճանապարհը ամբողջովին փակ չէ, սնունդ հասնում է ինչ-որ ճանապարհով, հայտարարեց, թե Արցախը երբեք միասնության համար չի պայքարել, եւ այլն:

Իսկ իրականում Վարդանյանն անզոր եղավ անգամ կառավարական կաբինետ ձեւավորել, ամիսներով թափուր մնացին նախարարի պաշտոնները, ի վերջո Արայիկ Հարությունյանի հավատարիմները նշանակվեցին նախարարներ:

Armlur.am-ի լավատեղյակ աղբյուրները հայտնում են, որ Ռուբեն Վարդանյանն իր փոքրաթիվ թիմին անուղղակի հրահանգել է Արցախի իշխանությունների դեմ լրատվական պայքար մղել՝ հիմքում ունենալով այն թեզը, թե Վարդանյանը հերոս է, Ադրբեջանն ուզում է նրա հրաժարականը, իսկ մյուսներն Արցախի շահին դեմ են աշխատում: Այսինքն՝Արցախի գործող իշխանության մի թեւը մյուս թեւի դեմ լրատվական պայքար է մղում, ինչն առնվազն տարակուսելի է:

Ստացվում է՝ մի կողմից շրջափակման մեջ է Արցախը, մյուս կողմից՝ սով ու ճգնաժամ է, բայց Արցախում զբաղված են փոխադարձ հարձակումներով, ինչը անթույլատրելի է:

Վիճակն այնքան է լարվել, որ լուրեր սպրդեցին, թե Արայիկ Հարությունյանը ցանկանում է աշխատանքից ազատել Ռուբեն Վարդանյանին, իսկ որոշներն էլ պնդում են, թե այդ դեպքում Հարությունյանն էլ պետք է հրաժարական տա, հեռանա: Ինքը Հարությունյանն էլ, ArmLur.am-ի տեղեկություններով, պատրաստակամություն է հայտնել հրաժարվել եւ հեռանալ Վարդանյանի հետ միասին՝նոր ընտրության հնարավորություն բացելով:

Նոր ընտրությունները Արցախում լուրջ մարտահրավեր կարող են լինել, եւ անթուլատրելի է անգամ մտածել այդ մասին:

Դրանով Ադրբեջանին հնարավորություն կտրվի վերջ դնել Արցախի ինքնակառավարման մարմիններին եւ հաստատել իր գերիշխանությունը: Չի բացառվում, որ այն կարողանա հասնել միջազգային դերակատարների՝ ընտրությունները չընդունող ու դատապարտող հայտարարություններին, ինչպես դա եղել է Աբխազիայում եւ Հարավային Օսեթիայում: Բացի այդ, դրանք պատրվակ բռնելով՝ կարող է հերթական «հատուկ օպերացիան» կամ «ակտիվիստների» հերթական ակցիան ծրագրել:

Բացի այդ, փորձագետները պնդում են, որ հումանիտար ճգնաժամի կիզակետում արտահերթ ընտրությունների օրակարգ ձեւավորելը միջազգային հանրությանը մտածելու տեղիք կտա, թե արդյոք կա իրական հումանիտար աղետ:

Այս իրավիճակում ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը ճիշտ չի համարում Վարդանյանին հեռացնելը եւ ճիշտ չի համարել նաեւ իր հրաժարականը, որը կարող է անկանխատեսելի հետեւանքների բերել:

Այսօր Արցախն ունի օրինակն, ընտրված ղեկավարություն՝ նախագահ եւ խորհրդարան, որը պետք է գործի:

Երեկ Արցախում իրավիճակի մասով բազմաթիվ քննարկումներ են եղել: Armlur.am-ի տեղեկություններով՝ քննարկումների ժամանակ Ռուբեն Վարդանյանը պնդել է իր տեսակետը, Արայիկ Հարությունյանն ասել է, թե պատրաստ է եւ ցանկանում է իշխանություն հանձնել, ժողովուրդը նոր ղեկավար ընտրի, սակայն ԱԺ մեծամասնությունն ասել է, որ պետք չէ փորձություն սարքել, եւ ճիշտն այն է, որ նախագահը շարունակի իր պաշտոնավարումը, իսկ ՀՅԴ-ականները կողմ են եղել հրաժարականին. ի վերջո որոշում է կայացվել ներդաշնակ աշխատել: Առաջիկայում Արցախի ներքաղաքական ճգնաժամն այսպես կհանգուցալուծվի:

Թե որքան կտեւի այս ներդաշնակությունը, դժվար է ասել, բայց փաստ է, որ ողջ Արցախում իրավիճակը, միեւնույնն է, լարված է, եւ օրվա իշխանությունները դե ֆակտո զբաղված են մեկ հարցով՝ օրվա հացի խնդրի ապահովմամբ բնակիչների համար: Ռուբեն Վարդանյանն էլ փաստացի կտրոն բաժանող է:

Ու թեեւ Արցախը պատրաստակամ է բանակցությունների աշխարհի եւ Ադրբեջանի հետ, սակայն դրանք չեն կայանում, եւ կյանքի ճանապարհը շարունակում է փակ մնալ աշխարհի լռության, ՌԴ-ի ու ԱՄՆ-ի անգործության պատճառով:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՋԱՆՑՔ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը թե՛ Ռուսաստանին, թե՛ Ուկրաինային կոչ է արել մարդասիրական միջանցք բացել ռազմագերիներին փոխանակելու համար: Այս մասին թուրքական լրատվամիջոցներն են գրում:

Թուրքայի նախագահի առաջարկ-հորդորի մասին նաեւ Ուկրաինայի օմբուդսմենը՝ Դմիտրի Լյուբինեցն է հայտարարել «Ուկրինֆորմ»-ին տված հարցազրույցում՝ ակնարկելով նման միջանցքի գաղափարի մասին:

Նշենք, որ նախորդ շաբաթվա սկզբին հանդիպել էին Ուկրաինայի եւ Ռուսաստանի օմբուդսմեններ Դմիտրի Լյուբինեցն ու Տատյանա Մոսկալկովայան: Հանդիպումը տեղի էր ունեցել Թուրքիայում, ինչի ժամանակ երկուստեք կարեւորվել էր մարդասիրական միջանցք բացելու անհրաժեշտությունը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը հունվարի 16-ին ստորագրել է մի շարք հրամանագրեր:

Համաձայն հրամանագրերի՝ գեներալ-մայոր Աշոտ Հակոբջանյանն ազատվել է ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի պաշտոնից եւ արձակվել Ազգային անվտանգության մարմիններում ծառայությունից՝երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ:

Գեներալ-մայոր Արարատ Մելքումյանը նշանակվել է ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն՝ ազատվելով ԱՀ անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնից:

Սամվել Շահրամանյանը նշանակվել է ԱՀ անվտանգության խորհրդի քարտուղար՝ ազատվելով Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալի պաշտոնից:

ՆԻՍՏ Է ԱՐՎԵԼ

ArmLur-ի տեղեկություններով՝ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունը շաբաթ օրը նիստ է արել: Մեր տեղեկություններով՝ ԱԺ նոր նստաշրջանին ընդառաջ՝ ընդդիմությունը քննարկել է առաջիկա քայլերը, խմբակցության ռազմավարությունը, ինչպես նաեւ նստաշրջանի օրակարգի հետ կապված քննարկում է եղել:

ԱՊԱՅՈՒՅՑ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՀԵՐՔԵԼ ԱՆՀԵՐՔԵԼԻՆ

Օրեր առաջ «Ժողովուրդ» օրաթերթն անդրադարձել էր ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ընտանիքին պատկանող «Սիլ ինշուրանս» ապահովագրական ընկերությանը: Գրել էինք, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն պահանջել է պատգամավորի ընտանիքին պատկանող ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այսինքն՝ ընկերությանը, այսպես կոչված, «սեւ ցուցակում» ներառելու պահանջի պատվիրատուն ՊԵԿ-ն է: «Սիլ ինշուրանս»-ը, սակայն, չի հայտնվել «սեւ ցուցակում»: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ներել է նաեւ «Սիլ գրուպ» -ի մամուլի խոսնակ Աննա Մկրտչյանը՝ ասելով. ««Սիլ ինշուրանս»-ը երբեւէ չի ներառվել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում»: Այս մասին լուրը հրապարակելուց հետո «Սիլ ինշուրանս» ընկերությունը շտապեց «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն ուղարկել հերքման ինչ-որ տեքստ՝ պահանջելով «մեկշաբաթյա ժամկետում «Ժողովուրդ» օրաթերթի առաջին իսկ թողարկման մեջ՝ 1-ին էջում, եւ www.armlur.am կայքում հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները, այն է՝ «ՊԵԿ-ը պահանջել է Սուքիասյանի ընտանիքին պատկանող ընկերությանը ներառել «սեւ ցուցակում» փաստը»: Բայց ի՞նչը հերքենք, եթե մենք ունենք մեր գրածը վկայող կոնկրետ փաստաթուղթ:



SIL INSURANCE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

Ժամանակացույց

ԳԲՔԱ-ԼՕ-2021/116 ընթացակարգի քննության նիստի

«Սիլ ինշուրանս» ԱՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի (Պատվիրատու ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/7») քննության վերաբերյալ որոշման նիստը տեղի կունենա 19.01.2022թ. ժամը 15:40-ին, ք. Երևան, Մելիք-Ադամյան 1 հասցեում, 1-ին հարկի թիվ 115 նիստերի դահլիճում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Եւ այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է գնանշման հարցում: Մասնակցության հայտեր ներկայացրել են «Սիլ ինշուրանս», «Ռոսգոսստրախ-Արմենիա», «Արմենիա ինշուրանս», «Բի Բի Էս Սի», «Նաիրի ինշուրանս» ընկերությունները եւ Ա/Ձ Արթուր Կարապետյանը: Նվազագույն գին առաջարկել է «Նաիրի ինշուրանս» ընկերությունը՝ 4 մլն 553 հազար դրամ, իսկ ՊԵԿ-ի կողմից պլանավորված առավելագույն ընդհանուր արժեքը եղել է 4 մլն 986 հազար դրամ: Բոլոր մասնակիցները ճանաչվել են հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ, ինչից հետո նիստը կասեցվել է, եւ բոլոր մասնակիցները հրավիրվել են գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունների: Բանակցությունների ավարտին մասնակիցները հայտով ներկայացված գները թողել են անփոփոխ, եւ «Նաիրի ինշուրանս» ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

Նշենք, որ «Սիլ ինշուրանս», «Ռոսգոսստրախ-Արմենիա», «Բի Բի Էս Սի» ընկերությունները նույն գնային առաջարկն են ներկայացրել՝ 4 մլն 846 հազար դրամ, սակայն «Սիլ ինշուրանս»-ի համար անհասկանալի է, թե ինչու է «Սիլ ինշուրանս»-ը վերը նշված ընկերություններից հետո հաջորդ տեղը զբաղեցրել այն դեպքում, երբ «Բի Բի Էս Սի»-ն չի հանդիսանում ապահովագրական ընկերություն եւ գնման ընթացակարգին իրավունք չի ունեցել մասնակցելու: Ստացվել է, որ հարցմանը մասնակցել են թվով 4 ապահովագրական ընկերություն եւ 2 ոչ ապահովագրական ընկերություններ: Մեզ հայտնի դարձավ նաեւ, որ «Սիլ ինշուրանս» ընկերությունը դիմել է բողոքներ քննող անձին եւ խնդրել պարտավորեցնել Պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շարժիչավոր փոխադրամիջոցների ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգով գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Նաիրի ինշուրանս» ընկերության վերաբերյալ կայացված որոշումը,

նաեւ խնդրել է «Նաիրի ինշուրանս», «Արմենիա ինշուրանս» եւ «Բի Բի Էս Սի» ընկերությունների հայտերը գնահատել անբավարար եւ մերժել: Բացի այս, մեզ հայտնի դարձավ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է «Սիլ ինշուրանս»-ի բողոքը բավարարվել մասնակիորեն եւ «Բի Բի Սի Էս» ընկերության հայտը գնահատել անբավարար ու մերժել: Մնացած մասով բողոքը մերժվել է: Ներկայացնում ենք նաեւ ՊԵԿ-ի պահանջը «Սիլ ինշուրանս»-ին ներառելու «սեւ ցուցակում»: Հիմա ինչպե՞ս հերքի «Ժողովուրդ» օրաթերթը ՊԵԿ պաշտոնական տեղեկությունը, որը կա նաեւ բաց աղբյուրներում:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ՝ ԲԱԺԻՆ

ԳՈՂԱՑԵԼ Է ԽՈՇՈՐ ԳՈՒՄԱՐ ԵՎ ՈՍԿՅԱ ԶԱՐԴԵՐ

Դեկտեմբերի 8-ին ոստիկանության Արմավիրի բաժնում ստացվեց հաղորդում, որ Արմավիր քաղաքի Մաուսոցի փողոցի մի բնակարանից գողացել են խոշոր գումար եւ ոսկյա զարդեր:

Բաժնի օպերատիվ խումբը մեկնեց դեպքի վայր, ձեռնարկեց անհրաժեշտ միջոցառումներ: Իրավապահները, ըստ տանտերերի պատմածի, ենթադրեցին, որ տուն էին մտել ժամը 9-ից 15.20-ը, երբ տանը մարդ չէր եղել, իսկ մուտքի դուռը բացել էին հարմարեցված գործիքով:

Ննջասենյակի պահարանից տարել էին մեկ միլիոն 290 հազար դրամ եւ ոսկյա 11 զարդ: Ոչ մի հետք, կասկածելի ոչ մի հանգամանք, ինչն ինքնին կասկածելի էր:

Արմավիրի մարզային վարչությունում նախաձեռնվեց քրեական վարույթ: Առաջ քաշվեցին տարբեր վարկածներ, նաեւ այնպիսին, որը կբացատրեր, թե բնակարանային գողության վայրում ինչու չկան այլ հետքեր ու կասկածելի հանգամանքներ:

Արմավիրի քրեական հետախույզների միջոցառումները տեւական ժամանակ արդյունք չէին տալիս, եւ վարկածը, որ ոչ մի գողություն էլ չէր եղել, դառնում էր ավելի հավանական: Հունվարի 14-ին վերջապես պարզվեց, որ եւ՛ փողը, եւ՛ ոսկյա զարդերը վերցրել էր տան 32-ամյա հարսը եւ տվել 28-ամյա ընկերոջը, որն էլ կատարել էր խաղադրույք եւ պարտվել:

Հարսը հրավիրվեց ոստիկանության բաժին եւ խոստովանեց:

Նա ներկայացվել է Արմավիրի մարզային քննչական վարչություն:

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Է ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Սեւակ Աբրահամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով N զորամասի հրամանատարի պաշտոնը, խախտել է մարտական հերթապահություն կրելու կանոնները, որպիսի գործողությունների հետեւանքով ժամանակին չի հայտնաբերվել եւ չի կասեցվել պետության դեմ հարձակումը:

ՀԱՐՎԱԾԵԼ Է ԵՐԵԽԱՅԻՆ

Armlur.am-ին հայտնի դարձավ, որ Լ. Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել:

Նա 2022 թվականի հոկտեմբերի 07-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Երեւան քաղաքի Առնո Բաբաջանյան 4 հասցեում գտնվող «Երեւանի թիվ 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մուտքի մոտ, նկատելով իր որդու՝նույն դպրոցի 4-րդ դասարանի աշակերտ Գրիշա Էդուարդի Վարդանյանի եւ վերջինիս համադասարանցի՛ անչափահաս՝ 2012 թվականին ծնած Գարիկ Գեւորգի Բեյբությանի միջեւ տեղի ունեցող հրմշտոցը, հաստատապես տեղյակ լինելով Գարիկ Գեւորգի Բեյբությանի՝ անչափահաս լինելու հանգամանքի մասին, մոտեցել է վերջինիս եւ դիտավորությամբ երկու անգամ ձեռքով հարվածելով Գարիկ Բեյբությանի աջ այտին եւ բռնի այլ գործողություններ կատարելով՝ ոլորելով վերջինիս աջ ականջը՝ պատճառել է ֆիզիկական ցավ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱ ՏՈՒԺԱԾ

Հունվարի 15-ին՝ ժամը 22:49-ին, ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Կոմիտասի պողոտայի եւ Վրացական փողոցի խաչմերուկում տեղի է ունեցել ՃՏՊ. կա տուժած: Այս մասին հայտնում են ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայությունից:

ՀՐԴԵՀ՝ ՏԱՆԻՔՈՒՄ

Հունվարի 16-ին՝ ժամը 02:16-ին, Շիրակի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Գյումրի քաղաքի Շահումյան փողոցում գտնվող մթերային խանութում:

Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է երկհարկանի խանութի տանիքում (մոտ 110 քմ): Հրդեհը մեկուսացվել է ժամը 03:10-ին, մարվել՝ 03:50-ին: Այրվել են երկրորդ հարկի առաստաղը մասամբ եւ տանիքի փայտե կառուցատարրերը (մոտ 40 քմ), ջերմահարվել՝մոտ 20 քմ:

ԵՐԵԽԱՆ ՍԱՀԱՑԵԼ Է

Հունվարի 3-ին հաղորդվել էր, որ Երեւան-Երասխ ճանապարհին՝Դիմիտրով գյուղի հատվածում, «ՎԱԶ-2107» մակնիշի մեքենան դուրս էր եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել: Վարորդը եւ հինգ ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել էին հիվանդանոց: Հունվարի 13-ին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ ուղեւորներից 3-ամյա Արամ Սարգսյանը մահացել է: Քրեական վարույթը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 13-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 116 դեպք, որոնցից 7-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽՈՒՍԱՓՈՒՄ Է ՊԱՏԱՍԽԱՆԵԼ

Տավուշի մարզի համայնքների աղբավայրերի տեղակայության վայրը խնդիր է: Օրինակ՝ Իջեւան քաղաքի աղբավայրը գտնվում է Իջեւան խոշորացված համայնքի Լուսաձոր բնակավայրի վարչական տարածքում՝ Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի եզրին: Բնակավայրերին մոտ են գտնվում նաեւ Նոյեմբերյան եւ Դիլիջան քաղաքների աղբավայրերը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին երկու անգամ, վերջինը՝ 2022թ. դեկտեմբերի 26-ին, տեղեկատվական հարցում է ուղարկվել «Ժողովուրդ» օրաթերթի անունից՝ խնդրելով պատասխանել այն հարցին, թե Տավուշի մարզի տարածքում ներկայումս քանի աղբավայր է գործում, դրանցից քանիսն ունի համապատասխան հողհատկացում, քանիսն է համապատասխանում օրենքներով աղբավայրերին ներկայացվող պահանջներին: Երկու անգամն էլ մարզպետը խուսափել է պատասխանել՝ խորհուրդ տալով հարցն ուղղել մարզի համայնքապետարաններին, քանի որ հարցը նրանց գործառույթների տիրույթում է: Տավուշի մարզպետարանի աշխատակազմը ինչո՞ւ է պետական բյուջեից մեծ աշխատավարձեր, պարգեւավճարներ ստանում, ո՞րն է մարզում իր համակարգող բնույթը, եթե մարզպետը խուսափում է պատասխանել մարզում գործող աղբավայրերի վերաբերյալ հասարակ հարցին:

ՊԱՏԸ ՉԵՆ ՆՈՐՈԳՈՒՄ

Ավելի քան երեք տարի է, ինչ Տավուշի մարզի Իջեւան-Բերդ ավտոճանապարհի Վազաշեն-Պառավաքար շրջանցիկ, համեմատաբար ապահով ճանապարհին կառուցված, ճանապարհի դիմացի բարձունքներում տեղակայված ադրբեջանական հենակետերի գնդակոծություններից պաշտպանող պատի մի մասը քանդված է: Անցած տարիներին պետական բյուջեից հսկայական գումարներ են հատկացվել պետական պաշտոնյաներին պարգեւատրելու նպատակով, սակայն սահմանագոտում ավտոմեքենաների երթեւեկի անվտանգությունն ապահովող պատի քանդված հատվածի վերանորոգման համար պետական բյուջեից գումար չի հատկացվել: Եթե սահմանագոտու այդ հատվածում իրավիճակը լարվի, ադրբեջանական զինուժը հրաձգային կրակ բացի, Բերդ-Իջեւան ավտոճանապարհի վերոհիշյալ հատվածով անցնող ավտոմեքենաները եւ դրանցում գտնվողներն ազերի զինյալների համար դառնալու են անպաշտպան թիրախներ:

ԾՐԱԳՐԵՐԸ ՄՆԱՑԻՆ ԹՂԹԻ ՎՐԱ

2017 թվականին նախատեսվում էր Տավուշի մարզում կառուցել Հախումի եւ Կողբի ջրամբարները, դրանցում ընդհանուր առմամբ կուտակել 2 միլիոն խորանարդ մետր ջուր, սակայն սահմանագոտում այդ ջրամբարների կառուցման ծրագրերը մնացին թղթի վրա: Նիկոլ Փաշինյանի իշխանության չորսուկես տարիների ընթացքում Տավուշի մարզում ոչ մի ջրամբար չի կառուցվել: Տավուշի մարզի Աղստեւ, Ոսկեպար, Հախում, Քարահան եւ այլ գետերի քաղցրահամ ջրերը շարունակում են հոսել Ադրբեջան, այնտեղ կուտակվում են ոռոգման ջրամբարներում, ոռոգում Ադրբեջանի դաշտերն ու այգիները: Վերջին տարիներին ամռանն Ադրբեջանում երաշտ է, Տավուշի սահմանագոտում ոռոգման ջրամբարների կառուցումից հետո Ադրբեջանը որոշակի կախվածություն կունենար Հայաստանից:

Ո. ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՇՏՈՆԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ

ՍՈՒՏ ՀԱՂՈՐԴՈՒՄ՝ ՀՈՐԵՂԲՈՐ ԴԵՄ

2022թ. նոյեմբերի 8-ին Գոռ Չոբանյանը ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է տվել, որ Տավուշի մարզի Վերին Կարմիրաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար Կամո Չոբանյանը չարաշահել է պաշտոնեական լիազորությունները. վաճառել է գյուղի շարքացանը, մշակույթի տան տանիքը փոխարինել է նոր թիթեղներով, եւ փոխարինված 100քմ ընդհանուր մակերեսով թիթեղներն այժմ առկա չեն, գյուղի մանկապարտեզի հին, բեսոնյա «պանելները» տարել է իր տան մոտ եւ սարքել անասնագոմ, գյուղի համար ստացված «պոպոքի» տնկիները ամբողջությամբ տվել է գյուղապետարանում աշխատող Ս.-ին, գյուղին պատկանող 2 մեքենայա տարաները վաճառել է, դրանք ներկայումս գտնվում են «Տավուշ տեքստիլ» գործարանում, գյուղի հասցոցները 420 հազար դրամով վաճառել է նույն գյուղի բնակիչ Սարգիս Խ.-ին: Գոռ Չոբանյանի հաղորդումն ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: Բերդ համայնքի Վ. Կարմիրաղբյուր գյուղի վարչական ղեկավար Կամո Չոբանյանը հայտնեց, որ դեկտեմբերի 15-ին ինքը՝ որպես վկա, հարցաքննվել է Հակակոռուպցիոն կոմիտեում, ասաց, որ իր դեմ հաղորդում տված Գոռ Չոբանյանն իր հարազատ հորեղբոր որդին է, նա մեծ հակում ունի ալկոհոլի հանդեպ, նրա երեխաները այժմ մանկատանն են, ինքը Աբովյանում ուրիշների անասուններն է պահում, կինն էլ Բերդում նույն գործով է զբաղվում, Գոռն ու իր կինը նախկինում «Կիսաբաց լուսամուտներում» նկարահանվել են: Կ. Չոբանյանը կես առ կես հերքեց իրեն առաջադրված մեղադրանքները: Նա ասաց, որ վերոհիշյալ տնկիների տնկումը եղել է բաղաքացիական նախաձեռնություն, դասախոսներ են եկել, Վ. Կարմիրաղբյուրում, Ն. Կարմիրաղբյուրում, Չինարիում տնկիներ են տնկել, Վ. Կարմիրաղբյուրում մի քանի տասնյակ ընտանիքների բաժանել ընկուզենու տնկիներ:

«Տավուշ տեքստիլ» գործարանում գտնվող տարաների մասին Կ. Չոբանյանը հայտնեց, որ 2008թ. նոյեմբերի 1-ին ինքը ստանձնել է համայնքի ղեկավարի պաշտոնը, այդ ժամանակ համայնքապետարանի հաշվեկշռում տարաներ չեն եղել: Համայնքի ավագանու՝ 2012թ. կամ 2013թ. որոշմամբ՝ գյուղի բնակիչ Սարգիս Խոջայանին 400 հազար դրամով վաճառվել է հաստոց, որը եղել 1965թ. արտադրության, հնամաշ, անսարք վիճակում: Մանկապարտեզի նախկին հենասալերը պատկանել են «Տավուշշին» ընկերությանը, մասնագիտական եզրակացությամբ դրանք խոտանվել են որպես շինարարական աղբ: Կ. Չոբանյանը դրանցից 11 հատ խնդրել է «Տավուշշին»-ի տնօրեն Վաչիկ Ապրեսյանից եւ այդ խոտանված հենասալերից 3մx5մ մակերեսով անասնագոմ է սարքել, խոտանված հենասալերից տվել են նաեւ գյուղի այլ բնակիչների: Կ. Չոբանյանն ասաց, որ գյուղի մշակույթի տան տանիքը ադրբեջանական գնդակոծություններից մեծ չափով վնասվել է, 2020թ. մշակույթի տան կտուրը փոխել են, վնասված թիթեղները ստացականով հանձնել են սահմանապահ դիրքերից մեկին: 2008թ. արտադրության շարքացանը Կ. Չոբանյանը գյուղ է բերել Համաշխարհային բանկի ծրագրով, այն համայնքապետարանի հաշվեկշռում է եւ ծառայում է համայնքին: Կ. Չոբանյանը լրագրողիս տրամադրեց ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի 2022թ. նոյեմբերի 18-ի որոշումը՝ իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 441 հոդվածով քրեական հետապնդում չհարուցելու վերաբերյալ: Այս դեպքում բողոքը վերաբերում էր համայնքապետանի հաշվեկշռում գտնվող 1979 եւ 1982 թվականների արտադրության «НИВА СК5» մակնիշի հացահատիկահավաք 2 կոմբայններին, որոնք 2001թ.-ից չեն շահագործվել եւ գտնվել են կոմբայնավարների տների բակերում: 2015թ. մայիսի 7-ին Վ. Կարմիրաղբյուր համայնքը 27,5 միլիոն դրամով ձեռք է բերել հացահատիկահավաք նոր կոմբայն, դրանից հետո համայնքի ավագանին միաձայն որոշել է հնամաշ եւ անպետք 2 կոմբայնները վաճառել եւ գումարներն ուղղել նոր կոմբայնի գումարի մասնակի վճարմանը: Կոմբայններից մեկը 400 հազար դրամով գնել է գյուղի բնակիչ Սարգիս Խոջայանը, երկրորդ կոմբայնը գնել ցանկացող չի եղել:

Կ. Չոբանյանը հայտնեց, որ իր դեմ զրպարտանքների հետեւում կանգնած են իրենց գյուղից 4-5 մարդ, որոնք 2008 թվականից մինչեւ հիմա համայնքի բյուջե ընդհանրապես հարկեր ու տուրքեր չեն մուծել: Նրանք գյուղից օղի եւ գինի են ուղարկում ալկոհոլի նկատմամբ մեծ հակում ունեցող Գոռ Չոբանյանին, որը զրպարտել է իր հորեղբոր որդի վարչական ղեկավարին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԼՈՒՐԵՐ

ԲԵՆԶԻՆՆ ԷԺԱՆԱՑԵԼ Է

Այս տարվա հունվարի 9-ի տվյալներով՝ աշխարհում բենզինի միջին գինը կազմել է 1.29 դոլար: Բենզինի եւ դիզելային վառելիքի գները նվազել են նաեւ մեր հանրապետությունում: Հայաստանյան որոշ բենզալցակայաններում Ռեգուլյար տեսակի բենզինի մեկ լիտրը վաճառվում է 350 դրամով, Պրեմիումը՝ 370 դրամով:

Այս շուկայում գնանկում արձանագրել է նաեւ Հայաստանի վիճակագրական կոմիտեն, ըստ որի՝ նախորդ տարվա դեկտեմբերին, նոյեմբերի համեմատ, հանրապետությունում արձանագրվել է բենզինի 11.3, դիզելային վառելիքի՝ 7.2 տոկոս գնանկում:

Նախորդ տարվա դեկտեմբերին, 2021 թվականի դեկտեմբերի համեմատ, բենզինն էժանացել է 14.8 տոկոսով, դիզելային վառելիքը՝ թանկացել 13.7 տոկոսով:

Բենզինի գնի նվազման պատճառներից մեկը նավթամթերքի համաշխարհային շուկայում գրանցված անկումն է: Մասնագետների խոսքերով՝ մեր հանրապետությունում բենզինի ցածր գինը դեռ կպահպանվի. չի բացառվում, որ այն առաջիկայում էլ ավելի էժանանա:

ԾՆՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՊԱԿԱՍԵԼ Է

Հայաստանում նախորդ տարվա հունվար-նոյեմբերին ծնվածների թիվը պակասել է:

ArmLur.am-ը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ մեր հանրապետությունում եթե 2020 թվականի 11 ամիսներին ծնվածների թիվը կազմել է 33 հազար 346, 2021-ի նույն ժամանակահատվածում՝ 33 հազար 625, ապա նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այն պակասել է՝ դառնալով 33 հազար 177:

Պակասել է նաեւ մեռելածինների թիվը՝ 11 ամիսների ընթացքում 465-ից հասնելով 399-ի:

ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐ

Մանկական կերի շուկայում թանկացումներ են արձանագրվել:

ArmLur.am-ը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ մանկական սննդի գինը նախորդ տարվա դեկտեմբերին, 2021 թվականի նույն ժամանակահատվածի հետ համեմատ, աճել է 4.1 տոկոսով, իսկ, ահա, նախորդ տարվա դեկտեմբերին, նոյեմբերի համեմատ, մանկական սնունդը թանկացել է 0.6 տոկոսով:

Տեղեկացնենք, որ 100-գրամանոց խյուսերը սկսում են 1700 դրամից, իսկ շիլաների գները սկսում են 1700 դրամից եւ հասնում մինչեւ 6000 դրամի:

Կաթնային խառնուրդի արժեքը սկսում է 4600 դրամից եւ հասնում մինչեւ 17000 դրամի:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 30 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 42-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԱՃՈՒՐԴ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տեխնո էմ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական գույքը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«Տեխնո էմ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 30.01.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0373/04/22 սնանկության գործով 14.03.2022 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Տեխնո էմ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական գույքի (ավտոմեքենայի) հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 1 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող «LEXUS» մակնիշի, GX 470 տիպարի, 2005թ. արտադրության, 010SA10 հաշվառման համարանիշով, սեւ գույնի, ունիվերսալ տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ JTJBT20X150079272, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երեւան, Ադոնցի 6/1) (մեքենայի տեխնիկական վիճակը բավարար չէ շահագործման համար՝ ունի շարժիչի, ընթացային եւ այլ մասերի վերանորոգման կարիք):

Մեկնարկային գինը՝ 4,300,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված գույքի վրա առկա է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Տեխնո էմ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103397240000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՈՎՀԱՐԱՅԻՆ ԱՆՋԱՏՈՒՄՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՑՎԵՑԻՆ

Արցախի Հանրապետության պետական նախարար, օպերատիվ շտաբի պետ Ռուբեն Վարդանյանի ղեկավարությամբ երեկ տեղի է ունեցել շտաբի հերթական նիստը:

Պետնախարար Ռուբեն Վարդանյանը, ներկայացնելով ընթացիկ իրավիճակը, նշել է, որ շրջափակումը նոր մարտահրավերներ է առաջ բերում: «Շրջափակումը փոխում է տնտեսությունն ու պետության առաջնահերթությունները: Պետությունն արդեն ստիպված է արձագանքել շրջափակման հետեւանքով տնտեսական եւ սոցիալական ոլորտներում առաջացող խնդիրներին՝ վերանայելով իր աշխատանքը, մոտեցումները, ուղղությունները»,- ասել է Ռուբեն Վարդանյանը:

Միաժամանակ շրջափակումն ու դրա հետեւանքով ստեղծված ճգնաժամը, ըստ նրա, ստիպում են ավելի ռացիոնալ օգտագործել առկա ռեսուրսները, բացահայտել բոլոր խնդիրները, այդ թվում՝ ստվերային տնտեսության հետ կապված, ներդնել կառավարման ավելի արդյունավետ մոդելներ:

Նշվել է նաեւ, որ պետնախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ շրջափակման տնտեսական եւ սոցիալական հետեւանքների մեղմմանն ուղղած միջոցառումներ մշակելու նպատակով:

Նիստի ընթացքում զեկուցվել է կտրոնային համակարգի ներդրման ընթացքը, տեղեկացվել է, որ կազմակերպչական եւ տեխնիկական աշխատանքներն իրականացվում են սահմանված ժամանակացույցով: Համակարգի սահուն ներդրման նպատակով համապատասխան բացատրական եւ ուսուցողական աշխատանքներ են իրականացվելու ինչպես մատակարարների, այնպես էլ առեւտրային կետերի սեփականատերերի համար: Առաջնային մի քանի խումբ ապրանքների՝ կտրոնների վաճառքն իրականացվելու է ողջ հանրապետությունում՝ Ստեփանակերտում՝ 200, շրջաններում՝ 400 խանութների միջոցով:

Պետնախարարը կարեւորել է համակարգի ներդրմանը զուգահեռ բնակչության շրջանում իրազեկման աշխատանքների իրականացումը: Նա նաեւ անհրաժեշտ է համարել համապատասխան տեղեկատվական բազաների ստեղծումը:

Ներկայացվել է հանրապետությունում էներգամատակարարման հետ կապված իրավիճակը, որը շարունակում է լարված մնալ: Հայաստանից Արցախ էներգասնուցումը նախկինի պես խափանված է, քանի որ ադրբեջանական կողմը մասնագետներին թույլ չի տալիս այցելել իրենց վերահսկողության տակ գտնվող տարածք՝ հասկանալու խափանման պատճառները: Բնակչության նվազագույն էներգետիկ կարիքները հնարավորինս երկարաժամկետ կտրվածքով ապահովելու համար վաղվանից անցում կկատարվի հովհարային անջատումների չորսժամյա գրաֆիկի՝ ներկայիս երկու ժամվա փոխարեն:

Զեկուցվել է իրավիճակը պարենային ապրանքների, դեղորայքի, դիզվառելիքի շուկաներում: Նշվել է նաեւ, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հաջողվել է նվազեցնել լարվածությունը կանխիկի դրամաշրջանառության մասով:

«Գազպրոմ Արմենիա»

Գ

2023 թվականի հունվար ամսվա 1-ին տասնօրյակին մատակարարված բնական գազի ստորին այրման ջերմության միջին արժեքները՝ ըստ տարածքների:

Բնական գազի ստորին այրման ջերմությունը, կկալ/մ3

ԻԱ-1ա, ԻԱ-1բ, ԻԱ-2, ԻԱ-3ա-1ա, ԻԱ-3ա-1բ , ԻԱ-3ա-2, ԻԱ-3բ , ԻԱ-4, ԻԲ-1, ԻԲ-2, ԻԲ-3, ԻԻԱ-1 տրծք	ԻԻԲ-1ա տրծք	ԻԻԲ-1բ, ԻԻԲ-1գ տրծք	ԻԻԱ-2, ԻԻԲ-2 տրծք	
8266	8239	8018	7990	

Չափումները կատարվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման եւ չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից:

Ի Ա-1ա- տարածք

Տավուշի ԳԳՄ
Բենտոնիտի ԳԲԿ (Իջեւան)
Բաղանիսի ԳԲԿ
Նոյեմբերյանի ԳԲԿ
Դիլիջանի ԳԲԿ

Սեւանի ԳԳՄ
Սեւանի ԳԲԿ
Ծովագյուղի ԳԲԿ

Լոռու ԳԳՄ
Ֆիոլետովոյի ԳԲԿ

Ի Ա-1բ տարածք

Սեւանի ԳԳՄ
Այգուտի ԳԲԿ

Ի Ա-2 տարածք

Լոռու ԳԳՄ
Ալավերդու ԳԲԿ
Թումանյանի ԳԲԿ
Ախթալայի ԳԲԿ
Ստեփանավանի ԳԲԿ (Գար-գար)
Վանաձորի ԳԲԿ-1
Վանաձորի ԳԲԿ-2 (Տարոն)
Մեղրուտի ԳԲԿ
Մարգահովիտի ԳԲԿ
Լերմոնտովոյի ԳԲԿ
Լեռնապատի ԳԲԿ
Սպիտակի ԳԲԿ
Մեծ Պառնու ԳԲԿ
Շիրակամուտի ԳԲԿ
Սարահարթի ԳԲԿ
Լուսաղբյուրի ԳԲԿ
Կուրթանի ԳԲԿ

Շիրակի ԳԳՄ
Գյումրու ԳԲԿ
Գյումրու ԳԲԿ (Ամասիայի գիծ)
Արեւիկի ԳԲԿ
Արթիկի ԳԲԿ
Մարալիկի ԳԲԿ
Լանջիկի ԳԲԿ
Ջարինջայի ԳԲԿ

Արագածոտնի ԳԳՄ
Թալինի ԳԲԿ

Արմավիրի ԳԳՄ
Քարակերտի ԳԲԿ

Ի Ա-3ա-1ա տարածք

Կոտայքի ԳԳՄ
Հրազդանի ԳԲԿ
Չարենցավանի ԳԲԿ

Ի Ա-3ա-1բ տարածք

Սեւանի ԳԳՄ
Գագարինի ԳԲԿ

Ի Ա-3ա-2 տարածք

Աբովյանի ԳԳՄ
Արզնու ԳԲԿ
Ջորավանի ԳԲԿ

Արագածոտնի ԳԳՄ
Աշտարակի ԳԲԿ

Ի Ա-3բ տարածք

Երեւանի ԳԳՄ
Ջրվեժի ԳԲԿ

Աբովյանի ԳԳՄ
Ակունքի ԳԲԿ
Ջրվեժի ԳԲԿ (Գառնիի գիծ)
Ողջաբերդի ԳԲԿ

«Հրազդան 5» հիմնարկ

Ի Ա-4 տարածք

Երեւանի ԳԳՄ
Երեւանի ԳԲԿ-1

Աբովյանի ԳԳՄ
Երեւանի ԳԲԿ-1 (Աբովյանի գիծ)

Ի Բ-1 տարածք

Երեւանի ԳԳՄ
Երեւանի ԳԲԿ-2

Ի Բ-2 տարածք
Երեւանի ԳԳՄ
Երեւանի ԳԲԿ-4

Արտաշատի ԳԳՄ
Նոր Խարբերդի ԳԲԿ
Մասիսի ԳԲԿ
Հայանիստի ԳԲԿ

Ի Բ-3 տարածք

Արմավիրի ԳԳՄ
Էջմիածնի ԳԲԿ
Մեծամորի ԳԲԿ
Արմավիրի ԳԲԿ

Ի Ա-1 տարածք

Գավառի ԳԳՄ
Գավառի ԳԲԿ
Սարուխանի ԳԲԿ
Ծովազարդի ԳԲԿ
Այրիվանի ԳԲԿ

Մարտունու ԳԳՄ
Մարտունու ԳԲԿ
Երանոսի ԳԲԿ
Վարդենիսի ԳԲԿ

Ի Ա-2 տարածք

Վայոց Ձորի ԳԳՄ
Եղեգնաձորի ԳԲԿ
Մալիշկայի ԳԲԿ
Վայքի ԳԲԿ
Ջերմուկի ԳԲԿ
Հեր-Հերի ԳԲԿ
Աղավնաձորի ԳԲԿ

Ի Բ-1ա տարածք

Արտաշատի ԳԳՄ
Գետազատի ԳԲԿ
Նարեկի ԳԲԿ

Ի Բ-1բ տարածք

Արտաշատի ԳԳՄ
Արտաշատի ԳԲԿ

Արարատի ԳԳՄ
Փ.Վեդու ԳԲԿ
Արարատի ԳԳՄ
Վեդու ԳԲԿ

Ի Բ-1գ տարածք

Արարատի ԳԳՄ
Արարատի ԳԲԿ

Ի Բ-2 տարածք

Սյունիքի ԳԳՄ
Կապանի ԳԲԿ
Համլետավանի ԳԲԿ
Քաջարանի ԳԲԿ
Ջագեձորի ԳԲԿ
Գորիսի ԳԲԿ
Խնձորեսկի ԳԲԿ
Տեղի ԳԲԿ
Սիսիանի ԳԲԿ
Շաղաթի ԳԲԿ
Սառնակունքի ԳԲԿ
Նորավանի ԳԲԿ
Հարթաշենի ԳԲԿ
Ագարակի ԳԲԿ
«Արցախգազ» ՓԲԸ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

2022 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅ ՀԱՅՏՆԻՆԵՐԻՑ ՈՎՔԵ՞Ր ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԱՆ 2022-ԻՆ

2022 թվականը ոչ միայն Հայաստանի եւ Արցախի սահմանների համար էր մեծ կորուստների եւ մարտահարվերեներով լի տարի, այլ նաեւ աննախադեպ էր հայ հայտնիների մահերով:

2022 թվականին փետրվարի 4-ին 64 տարեկան հասակում մահացավ կոմպոզիտոր, Երգի պետական թատրոնի հիմնադիր Արթուր Գրիգորյանը: Նշենք, որ Գրիգորյանը տեւական ժամանակ լուրջ առողջական խնդիրներ ուներ:

Մայիսի 9-ին ողբերգական պատահարի պատճառով կյանքից հեռացավ երիտասարդ եւ սիրված հաղորդավարուհի Արմինե Ճաղարյանը: Արմինեն մահացել է Դեբետ գետում նկարահանման ժամանակ:

Հունիսի 13-ին հայ հանդիսատեսը կորցրեց եւս մեկ լեգենդար արտիստի՝ կինոյի եւ թատրոնի դերասան, ՀՀ վաստակավոր եւ ժողովրդական արտիստ Ռաֆայել Քոթանջյանին:

2022 թվականի հունիսի 15-ին սրտի կաթվածից 55 տարեկան հասակում մահացավ երգիչ, կլառնետիստ Հովհաննես Վարդանյանը:

Հոկտեմբերի 31-ին 77 տարեկան հասակում կյանքից հեռացավ ՀՀ ժողովրդական արտիստ, բեմադրիչ Վահե Շահվերդյանը: Նա բեմադրիչ, հաղորդավար Սուրեն Շահվերդյանի հայրն է:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱՔԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Դերասանուհի Լիանա Հակոբյանը վերջին շրջանում ենթարկվել է արտաքին փոփոխությունների: Նշենք, որ դերասանուհին ավելի վաղ մեզ հետ զրույցում ասել էր, որ արդեն 32 կիլոգրամ նիհարել է:

Չնայած գերզբաղվածությանն եւ հոգնածությանը՝ նա հասցնում է զբաղվել նաեւ ֆիզիկական ակտիվությամբ:

Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասել էր դերասանուհի Լիանա Հակոբյանը՝ անդրադառնալով ավելորդ քաշից ազատվելու իր տարբերակին ու բարդույթներին:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ՝ ԱՄՆ-ԻՑ

Երգչուհի Մարտա Կիրակոսյանը, որն ամուսնությունից հետո մշտական բնակություն է հաստատել Ամերիկայի Միացյալ Նահանգներում, պասիվ է ստեղծագործական կյանքում, սակայն բավականին ակտիվ է համացանցային տիրույթում:

Երգչուհին պարբերաբար ֆոտոշութեր է անում եւ իր լուսանկարներով կիսվում հետեւորդների հետ:

Երգչուհին երկրորդ անգամ մայրացել է 2022 թվականին: Նա ունի երկու որդի:

Հիշեցնենք, որ Մարտան եւ Նահապետն ամուսնացել են 2018 թվականի դեկտեմբերին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԵՐԱԶԱՆՔՆԵՐԻ ՀԱՆԳԻՍՏ

Դերասանուհի Տաթեւիկ Ադումյանն Ամանորից հետո մեկնել է Չիլի՝ երազանքների հանգստի ետեւից:

Տաթեւիկը, որն այնքան էլ ակտիվ չէ «Ինստագրամ» հարթակում, այս օրերին բավականին ակտիվ ձեւով կիսվում է իր հետեւորդների հետ, լուսանկարներ, հոլովակներ է ցուցադրում եւ ներկայացնում իր տպավորությունները:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ԴԱԴԱՐԵՑՐԵ՛Ք ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ»

Երգչուհի Ռոզա Լինը, որը Հայաստանը ներկայացրեց «Եվրատեսիլ 2022» երգի հեղինակավոր մրցույթում, միջազգային հանրությանը կոչ է արել աջակցել Արցախի հայերին:

Օրեր առաջ նա եվրատեսիլյան Snap հիթային երգը կատարել է iHeartRadio ALTer Ego համերգին: Երգչուհին բեմ է բարձրացել «Դադարեցրե՛ք շրջափակումը», «Արցախ» գրություններով հագուստով:

Հունվարի 16-ին Ռոզա Լինը գրառմամբ փորձել է հանրության լայն շրջանակին պարզաբանել իր ուղերձի նպատակը:

Նա խոստովանել է, որ ինքը մտածում է այն մարդկանց մասին, որոնք այժմ Արցախում են եւ կտրված են աշխարհից: «Դեկտեմբերի 12-ից Ադրբեջանի քաղաքացիները, որոնք հանդես են գալիս որպես «բնապահպաններ», շրջափակել են Լաչինի միջանցքը, որը Արցախը Հայաստանի եւ աշխարհի հետ կապող միակ ճանապարհն է: Դա Ադրբեջանի՝ հայերի վրա հարձակվելու եւս մեկ փորձ է. արցախցիները տառապում են: Միջանցքով ամեն օր Հայաստանից Արցախ մոտ 400 տոննա սննդամթերք եւ դեղորայք էր տեղափոխվում»,-նշել է Ռոզան ու շեշտել, որ 120 000 արցախահայեր չեն կարողանում հատել Հայաստանի սահմանը՝ բաժանված ընտանիքներից. նրանք լիովին մեկուսացված են եւ անպաշտպան:

Դիմելով միջազգային հանրությանը՝ Ռոզա Լինն ընդգծել է. «Ես խնդրում եմ ձեզ կանգնել իմ կողքին՝ ի պաշտպանություն Արցախի հայերի: Մենք պետք է դադարեցնենք շրջափակումը եւ թույլ չտանք, որ Ադրբեջանը շարունակի հայերի էթնիկ զտումների սարսափելի քաղաքականությունն Արցախում: Ինչպե՞ս կարող եք օգնել. շատ պարզ՝ սեղմելով իմ էջում զետեղված հղման վրա, ինչը մեխանիկորեն այն ցույց կտա Քամալա Հարիսին՝ խնդրելով նրան խախտել իր լռությունն այս հարցում, դադարեցնել ԱՄՆ ռազմական օգնությունն Ադրբեջանին եւ սկսել ԱՄՆ-ի մարդասիրական օգնությունն Արցախին»,-գրել է երգչուհին՝ խնդրելով տարածել իր հաղորդագրությունը:

● *Հունվարի 19-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «ՀՊԿՆ / Աննա Կնյազյան / Արմինե Սողոմոնյան» համերգը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

ՀԱՐՑ. Ի՞նչ ծառայություններ է իր մեջ ներառում ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ»-ի VIP ծառայությունը:

Մելինե Խաչատրյան (30 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ»-ի կոմերցիոն VIP ծառայությունը ներառում է՝

- առանձնացված հաշվառման ծառայություն,
- հավելյալ ուղեբեռի փոխադրման ծառայություն (VIP սրահից դեպի VIP ավտոկանգառ եւ հակառակ ուղղությամբ).
- ժամանման սպասասրահներում (ստերիլ գոտի) թեյի մատուցում (անսահմանափակ քանակությամբ),
- ժամանման սպասասրահներում (ստերիլ գոտի) սուրճի մատուցում (անսահմանափակ քանակությամբ),
- ալկոհոլային խմիչքներ,
- մեկ ոչ ալկոհոլային խմիչք (առկայության դեպքում):

«Զվարթնոց» օդանավակայան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». VIP ծառայության համար գանձվում է 70.000 ՀՀ դրամ (մինչեւ 6 տարեկան երեխաները սպասարկվում են անվճար): Հաշվառում VIP սրահում, ուղեկցում սահմանային հսկիչ կետ, Բիզնես սրահի մուտքի թույլտվություն (ուղեւորն անվտանգության եւ անձնագրային հսկիչ կետերն անցնում եւ գնում է ինքնաթիռ ինքնուրույն):

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքերում եւ որքա՞ն ժամանակով կարող է հետաձգվել քաղաքացու ուղեգրումը տուն-ինտերնատ:

Կարեն Վիրաբյան (45 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու ուղեգրումը տուն-ինտերնատ կարող է հետաձգվել՝ քաղաքացու կամ նրա խնամակալի կողմից սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) ներկայացված դիմումի (հիմնավոր պատճառների՝ առողջական խնդիրներ, հարազատի մահ, եղանակային պայմաններ եւ այլն) հիման վրա, մինչեւ 6 ամիս ժամկետով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացին պետք է ներկայանա բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի շուրջօրյա հաստատություն (տուն-ինտերնատ) ուղեգիրը ստանալու օրվանից 7-օրյա ժամկետում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

44-օրյա պատերազմում անմահացած Մխիթար Գալեյանի վեցամսական եղբոր լուսանկարը: Հունվարի 16-ին կրտսեր Մխիթարը դարձավ 6 ամսական:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.01.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: